

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 16.10.2020թ. կնքված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ գնման պայմանագրում 25.03.2024թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ

ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 7-ի N 344-Ն որոշում:

Փոփոխության նկարագրություն

ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:

Փոփոխության հիմնավորում

Պայմանագրի 7.5, 7.13 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ք. Երևան

25.03.2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայնախագիծ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 7-ի N 344-Ն որոշումը և Փոքրաքանակ երեխաներով համարված հանրակրթական դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության մատուցման համար Կողմերի միջև 16.10.2020թ. կնքված ՀՀԲԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 2024 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, Համաձայնագրի հավելվածը կազմված է 5 (հինգ) էջից կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն

Հ/Հ 900011047678, 900011047686, 900011047892,
900011047900, 900011052454, 900011052447,
900011048494, 900011048502, 900011048510,
900011052462, 900011048361, 900011052470,
900011052488, 900011047918, 900011048635,
900011048627, 900011048379, 900011048536
900011052496, 900011048528


ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)


Գ. Ազիզյան
(ստորագրություն)
